

ԱՆԴՐԵԱՍ ԿՐԵՏԱՅՈՒՄ Ա. ԽԱՉԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՃԱՌԻ ՆԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անդրեաս Կրեպացին (720 կամ 726) բյուզանդական մարենագրության երևելի ներկայացուցիչներից մեկն է: Ծնվել է Դամասկոսում: Տակավին 14 տարեկան հասակում առանձնանում է Երուսաղեմի Ս. Սաբբայի վանքը և շուրջը հայրնի է դառնում ոչ միայն իր ճգնակեցական սխրանքներով, այլ նաև մարենագրելու կարողությամբ: 679 թ. մասնակցում է 6-րդ եկեղեցաժողովին: Երուսաղեմ վերադառնալով այդ ժողովի որոշումներով շարունակում իր ճգնությունը, Ասրվածաշնչի և եկեղեցու հայրերի ասրվածաբանական ժառանգության սերտությունը: Նուսրիմիանոս Բ կայսեր կողմից նշանակվում է Կրեպեի եպիսկոպոս: Նա շուրջը հոջակվում է իր կրակոյր քարոզներով: Մասնակցում է 712 թ. Կ. Պոլսի միակամյա վարդապետություն հոջակած եկեղեցաժողովին¹:

Եկեղեցական մարենագրության պարմությանը Անդրեաս Կրեպացին հայրնի է իր ճառերով և հոգևոր երգերով, որոնց մեջ դրսևորվում է պերճաբան քարոզիչն ու նրբաճաշակ բանաստեղծը: Միջնադարում լայնորեն տարածված են եղել Ավերման, Տիրոջ թվատման, Պայծառակերպման, Խաչվերացին, Տիրամոր ծննդյան, Վերափոխման և սրբոց նվիրված նրա ճառերը:

Խաչվերացին նվիրված Անդրեաս Կրեպացու 2 ճառերից² մեկը թարգմանվել է հայերեն: Այն կարարվել է ամենայն հավանականությամբ Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսի օրոք (1066-1105), որ հայրնի էր իր լայնածավալ թարգմանական գործունեությամբ: Նայ իրականության մեջ ճառը վերագրվել է հայ մարդուն առավելագույնս ծանոթ և հարազատ Եպիփան Կիպրացու գրչին և նրա անունով էլ կենցաղավարել ձեռագրերում³: Նայերեն թարգմանությունը ներկայացնում է Σταυροῦ πανήγυριον ἄγομεν και το τῆς εκκλησιας ἄπαν κατόστραπτεται πληρωμα... սկսվածքով ճառը⁴ : Թարգմանությունը հիմնականում համընթաց ու համապատասխան է հունարեն բնագրին:

Ճառում կիրառված է խոսքի երկու եղանակ. **տարփող, փառաբանություն**, որ կարարվում է բառերի հարակրկնությամբ («Խաչիս», «Խաչն», «Երկրպագի Խաչն», «Այսար Խաչն», «Խաչն բարձրանայ», «Այսար», «Յորմէ հեպէ Խաչն», «Ջրեզ Յի-

1 Տե՛ս Ն. Քյոսեյան, Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV-VIII դդ.), Եր., 2007, էջ 249-250:

2 Տե՛ս Migne, PG, t. 97, col. 1017-1036, 1036-1045, CPG 8179, 8180:

3 Տե՛ս **Գ. Զարբանալեան**, Մարենագրան հայկական թարգմանությանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 416, նաև՝ **Ն. Բ. Մարգիսեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Վենետիկի Մխիթարեան Մարենագրանի, հր. Բ, Վենետիկ, 1924, էջ 39 (ուր կազմողը թյուրիմացաբար կշում է. «Յոյն բնագիրը կը պակսի»):

4 Տե՛ս Գ. Զարբանալեան, Մարենագրան հայկական թարգմանությանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 416, նաև՝ Ն. Բ. Մարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Վենետիկի Մխիթարեան Մարենագրանի, հր. Բ, Վենետիկ, 1924, էջ 39 (ուր կազմողը թյուրիմացաբար կշում է. «Յոյն բնագիրը կը պակսի»):

սուս», «Ով Խաչ», «Զարինակ Խաչիս» և այլն), երկու փարաբնույթ երեսույթների բեռնացմամբ («Երկրպագի այսաւր Խաչն և բագինք կործանեցան»), որով խոսքը սրանում է անհրաժեշտ հուզական լիցք և **փիպական մեկնաբանություն**, որը միջնադարում լայնորեն կիրառված սուրբգրային մեկնության միջոցներից էր: Վերջինս իրականացված է այլաբանական բացատրության հայրնի եղանակների կիրառումով, որն իր փեսական հիմնավորումն է գտնում հեղինակի հեղեյալ փողերի մեջ. «Մեծ է խորհուրդ Խաչիս ճշմարիտ, և ամենայն ուրեք վկայեն Գիրք սուրբ գայնս, որ նովաւ կարարէին, իբրու գայժմու սքանչելիս նախարպէր կանխաւ գարինական»: Խաչի խորհրդական նախօրինակն են համարվում հինկրականարանյան հայրնի իրողությունները («Գաւազան Յակոբայ», «Գաւազան Մովսէսի», «սիւնն հրեղէն», «գաւազանն, որ էհար գվէմն յանապարին», «գաւազանն [Ահարոնի], որ ծաղկեցաւ» և այլն):

Տիպական մեկնության առավել բնորոշ օրինակ է Մովսէսի ձեռքերի փարածումը, երբ Յեսու նավեն կովում էր ամաղեկացիների դեմ, «և Իսրայէլ գարանայր ի մարտին»: Իդէալ, այս բացատրությունը ճշգրտորեն համապատասխանում է Բառնաբասի նամակում առկա մեկնաբանությանը (ԺԲ)⁵: Տիպական մեկնաբանության, դարի աստվածաբանական հայեցողության այս փրամաբանությամբ են պայմանավորված այն ընդհանրությունները, որոնք առկա են Անդրեաս Կրեւացու և Դավիթ Անհաղթի համաբնույթ երկերում: Նամադրենք առավել բնորոշ հարվածներից մի քանիսը, որոնք երեսույթը ներկայացնում են հարակ կերպով.

Անդրեաս

Դավիթ

«Զարինակ Խաչիս կարարէր
գաւազան, որ էհար գվէմն
յանապարին և գեպարողիս
արարեալ գապառածն և գան-ծին
վէմն...»:

«Արինեալ ես, փայտ սուրբ, որ ի
քեզ և ի քոյդ խորհուրդ ի ջուրց
առնալն գաւազանաւ գջուրսն
հարկանելով՝ վիմա-փառէ, իբր զլոյծ
միտս և գվէմն հարեալ հոսանուր
գործէ...»:

«Մարտնագիրք Նայոց», Զ,
Անթիլիաս, 2007, էջ 1026 (102):

«Զարինակ Խաչիս ունէր սիւնն
հրեղէն և ամպն, որով առաջնորդէր ամպա-փե-սիլ սիւն, որ գանարանելի
Աստուած, և գանարձակելին
Իսրայէլ յԵգիպտոսէ ազարէր...»

«Արինեալ ես, փայտ սուրբ,
զլոյսն և զհուր ի քեզ բարձեալ
ունելով՝ քեզ հե-փեւելոցս յարակայ
ի կեանս յերկնային քաղաքն
առաջնորդես...»:
անդ, էջ 1026 (103):

⁵ Տե՛ս «Գանձասար», Աստուածաբանական հանդէս, 2010, Ը, էջ 191:

«... եւ զՍիսարայի, յորժամ փախեալ
եւ ի Դերովրայէ բեւեռեցաւ ընդ
ծամելիսն զԽաչն յայտնապէս
նախապաւելով...»:

Արիւնեալ, փայտ սուրբ, որ
փոխանակ Յա-յե-լի որդի
Կուսին՝ ցից զքեզ ընդ ծա-մելիսն
ձիախորոխս մահու վարել ի
դառ-նութիւն եւ ի մահ զճաշակն
նմա գործէ, եւ ընդ ուրիշ զգերեալ
մեռուցանէ...»:
անդ, էջ 1026 (109):

Ճառիս հայերէն թարգմանությունը հրապարակվում է ըստ ՄՄ թիվ 1522 (թ. 531բ - 536բ՝
ԺԲ դ. = A), 993 (թ.622բ-624բ՝ 1456 թ. = B)⁶ ձեռագրերի⁷:

ՆԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆ
փիլիսոփայական գիտ. դոկտոր

6 Տե՛ս **M. Van Esbroeck, U. Zanetti**, Le Manuscript Erevan 993, Inventaire des Pievces, REA, 1977, t. XII, p. 159, n. 366:

7 Ձեռագրերի հանգամանայից նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի», հտ. Գ, կազմեց Օ. Եզանեան, խմբագրութեամբ՝ Փ. Անթարեանի, Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Կ. Շահէ քիյ. Նայրապետեանի, Եր., 2007, էջ 1677-1720. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց», հտ. Ե, կազմեց Օ. Եզանեան, խմբագրութեամբ Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Կ. Շահէ քիյ. Նայրապետեանի, Եր., 2009, էջ 239-256:

ԵՒԹՆԵՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ. ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԵՊԻՓԱՆՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԻՊՐԱՑԻՈՅ ԳՈՎԵՍՏ ԱՍԱՑԵԱԼ
Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Խաչիա¹ Քրիստոսի տաւնեացուք եւ լրումն եկեղեցեաց պայծառանայ:
Խաչիա տաւնեացուք, եւ խնդուլթեամբ երեսք աշխարհի արփիափայլ նորոգի:
Խաչիա տաւնեացուք, որով աշխարհս ազատեցաւ ի խաւարէ, եւ, փոխանակ միգի, լոյսն ի ներքս ածաւ:
Խաչիա տաւնեացուք, եւ ընդ Խաչեալն վերասցուք:
Խաչիա տաւնեացուք, եւ Խաչելոյն խաչակից լիցուք:
Խաչիա տաւնեացուք, եւ յերկրի թողեալ զմեղս մեր, յերկինս մաքուր վերաթռիչ լինիցիմք:
Խաչիա տաւնեացուք, եւ զաշխարհ թողեալ ի վայր յանցանաւք հանդերձ զվերինն ստանամք զարքայութիւն:
Խաչիա տաւնեացուք, եւ խաւարն հալածի:
Խաչն բարձրանայ եւ բարձրացուցանէ ընդ ինքեան զիվայրանկեալ մարդկային բնութիւնս:
Խաչն բարձրանայ, եւ կործանի դիւաքն հպարտութիւն:
Խաչն բարձրանայ, եւ բանսարկութիւն հակառակութեան թշնամւոյ² հեռանայ եւ ցածուցեալ³ լինի:
Խաչն բարձրանայ եւ ընդ ինքեան բարձրացուցանէ զլրումն եկեղեցւոյ:
Խաչն⁴ բարձրանայ, եւ քաղաքք տաւնեն, եւ ժողովուրդք բերկրեալ նուէրս կատարեն⁵:
Խաչն բարձրանայ, եւ փակեալ դրունք⁶ դրախտին բանին⁷ այսաւր:
Խաչն բարձրանայ այսաւր, եւ արիւնն Աստուծոյ եւ ջուրն լուանայ զմեղս աշխարհիս⁸:
Այսաւր⁹ Խաչն բարձրանայ, եւ Քրիստոս յերկրի երեւի¹⁰:
Այսաւր Խաչն բարձրանայ, եւ մահ նովաւ մեռանի, վասն զի նա¹¹ Քրիստոսիւ զաւրացաւ եւ զէն Աստուծոյ կոչեցաւ:
Այսաւր Խաչն բարձրանայ, եւ փականք խաւարին փշրին, եւ արգելեալքն ի խաւարէն ի լոյս ելանեն:
Այսաւր Խաչն բարձրանայ, եւ դեւք սարսափմամբ հալածին, եւ երկրպագութիւն համարձակիմք նովաւ յաղթել աներեւոյթ թշնամւոյն:
Այսաւր Խաչն բարձրանայ եւ զմեզ ընդ ինքեան բարձրացուցանէ:
Այսաւր բարձրանայ¹² Խաչն Քրիստոսի¹³, եւ զսկզբնաւորն ընկղմէ:
Իսկ զԽաչէն յիշել պատճառք¹⁴ ուրախութեան լինի եւ ցածուցանող եւ կործանող խռովութեան: Իսկ զնշան Խաչին տեսանելով արիւնութեան առիթ եւ երկիւղի ազատիչ տեսողացն¹⁵ լինի:
Այսպիսի մեծ ստացուած եղեւ մեզ զաւրութիւն Խաչին, եւ որ ստացաւ զսա

ստացաւ գանձ անապական ծածկեալ յոսկէհան տեղւոյ¹⁶ յերկրէ ծագեալ¹⁷ որպէս զոսկի,

քանզի թաղեալ նշանն տէրունական¹⁸ վեր երեւեցաւ եւ երեւցոյց զաւարն,
քանզի¹⁹ հպարտութիւն դիւացն աւարեցաւ այսաւր յայտնութեամբ եւ
երեւմամբ սուրբ Խաչին,

քանզի հակառակ թշնամւոյն ինքնաձեւ սուրն երեւեցաւ յերկրէ²⁰,
քանզի եկեղեցիք զգարդ իւրեանց առեալ այսաւր,
քանզի զգրամն եգիտ զթագաւորական այսաւր, զոր կորոյս յառաջագոյն,
այսինքն է՝ Խաչն տէրունական, որ է նշանն Տեառն, փրկչական գէն, թագաւորական
զաւրութիւն, յաղթութեան նշան, ի վեր եւ ի խոնարհ միութիւն, ճշմարիտ հաւատոյ
դասակցութիւն, առաքելական գլուխ, մարգարէական²¹ հայելի, մարտիրոսաց
պսակ, Քրիստոսի երկրպագուացս առ հաւատչեայ:

Յորմէ հետէ Խաչն Քրիստոս երկրպագի:

Յորմէ հետէ Խաչն Որդին Աստուծոյ ծանուցաւ մեզ²²:

Յորմէ հետէ Խաչն ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ երկրպագանեմք²³:

Յորմէ հետէ Խաչն՝ հրէիցն խափանեցան աւրէնք, հեթանոսացն շիջաւ մոլո-
րութիւն²⁴, քրիստոնէականսս բարձրացաւ հաւատ, վիրացեալ թեւոքն սրբեցաք²⁵,
ի բազմացն արեանց ազատեցաք, զի զանարիւն պատարագն ճաշակեցաք:

Յորմէ հետէ Խաչն ի դիւական ճենճերացն ազատեցաք²⁶, զի հոգեւորական
անուշահոտութեան թափեալ իւղոյն հաղորդեցաք:

Յորմէ²⁷ հետէ Խաչն առասպելք եւ խաբէութիւնք խորտակեալ հեռացաւ²⁸:

Յորմէ հետէ Խաչն զՅիսուսի առ մեզ զԱստուածութեան խորհուրդ ճանաչեցաք:

Յորմէ²⁹ յետէ Խաչն զգեր ի վերոյ սկզբանն, որ նախասկիզբն իշխանութեամբն
էր գլուխ առ մեզ ծանեաք³⁰:

Յորմէ հետէ Խաչն ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին ուսաք զհաւատն,
եւ³¹ զբազմաստուածութիւնն հեթանոսացն զվայրենի բարբառնջանսն թողեալ ի բաց
վճարեցաք ի յանտիցն:

Յորմէ յետէ Խաչն ի նշանակ աւրինակաւ, որ ստուերացն մերժեցաք³²:

Յորմէ հետէ Խաչն, որ³³ արհամարհեցաւ մահ, խողխողեցան դեւք, քակեցան
դրաւշեալքն, անասնազոհութիւնն կոխեցաւ³⁴, կուռքն կործանեցան: Ընդ
ամենայն երկիր եկեղեցիք, սեղան, պատարագ, պաշտամունք, դասք հսկողաց,
աստուածաբանութիւնք, մկրտութիւն սուրբ, հաւատոյ միաձայնութիւն, գրոց
գիտութիւն, կենցաղոյս արհամարհութիւն, յերկինս մեծութիւն, ընդ Աստուծոյ
հաղորդութիւն: Եւ զի՞նչ պարտ է ասել:

Յորմէ հետէ Խաչն. ընդ հրեշտակս քաղաքակից լինին մարդիկ, եւ նոյն ինքն
երկրաւորացս եղեւ գնալի, եւ Աստուած ընդ մարդկան տեսանի եւ շրջի եւ խաւսի:

Այլ ո՛վ Խաչ, որ ես Քրիստոսի եւ մեզ ամենեցուն պարծանք, ո՛վ փայտ
նշանաւոր, յորոյ վերայ Քրիստոս տարածեցաւ, տունկ³⁵ անմահութեան, յորում
ողկոյցն Քրիստոս գկենսաբուղիս զըմպելին արբացոյց³⁶ մեզ:

Ո՛վ խաչ պատուական, որով պատառեցաւ ձեռագիրն յանցանաց եւ ձեռնագրեցաւ մեզ ազատութեան նշանն:

Ո՛վ խաչ երկրպագելի, բիւրապատիկ բարութեանց դարձարան, դրախտին աւանդաւոր, արքայութեան ժառանգեցուցանող, մեղաւորաց³⁷ քաւարան, ուղղութեան տուիչ:

ՁԲեզ Յիսուս, որ ի Քեզ խաչեցաւ, փայտ անմահութեան եցոյց մեզ:

ՁԲեզ Յիսուս³⁸, որ ի Քեզ խաչեցաւ՝ ճանապարհին, որ հանէ յերկինս, երեւ³⁹ եցոյց սանդուղիք:

ՁԲեզ⁴⁰ Քրիստոս, որ ի քեզ կախեցաւ, առիթ եցոյց աւրհնութեան⁴¹:

ՁԲեզ Յիսուս, որ ի Քեզ տարածեցաւ, կապանաց մեղաց արձակող առաջի կացոյց:

Քրիստոս, որ ի Քեզ կամաւ բարձրացաւ, զաշխարհս ընդ ինքեան բարձրացոյց:

Քրիստոս, որ վասն մեր բարձրացաւ ի Քեզ⁴², զբարձրացեալ աւճն պղնձի⁴³ արձանացոյց, ոչ եւս հարկանէ դարանակայութեամբ զգարչապարս, ոչ եւս տակաւին աւճն պղնձի զհարկանող աւճիցն ի բաց⁴⁴ փարատէ զյառաջատես խայթոցսն: Ոչ եւս այսուհետեւ անիծեալ լիցի ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ. զի ա՞րդ կամ որո՞վ⁴⁵ աւրինակաւ ամենաւրհնեալ մարմինն Յիսուսի Որդւոյն Աստուծոյ զանէծան յաւրհնութիւն փոխարկելով մեզ: Ոչ եւս այլ անիծեալ կայցէ խաչն, զի զանէծան խաչին ազատեաց եւ ընդ խաչին բեւեռեաց, եւ ինքնին բարձեալ զանէծան եւ փոխանակ ած ի ներքս զաւրհնութիւն:

Այսպէս խաչն տէրունական ամենայն բարութեանց եղեւ մեզ ժողովող:

Այսպէս տէրունական նշանս բազում անուամբք անուանեալ է: Խաչ կոչեցաւ⁴⁶ գաւազան ուղղութեան, գաւազան ժառանգութեան, գաւազան զաւրութեան. «Աթոռ Քո Աստուած յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան Քո»^{1*}, «Փրկեցէր գաւազանաւ զժառանգութիւնս Քո»^{2*}, «Գաւազան զաւրութեան առաքեսցէ Քեզ Տէր ի Սիրվնէ»^{3*}, «Յուպ քո եւ գաւազան. նոքա մխիթարեսցեն զիս»^{4*}:

Անուանեմք Փայտ կենաց, եւ է կենաց Փայտ ամենեցուն այնոցիկ, որք ունին զնա ամրութիւն իբրեւ յԱստուծոյ: «Ծառ տնկեալ», ասէ Դաւիթ. ո՞ւր. «ի գնացս ջուրց»^{5*}: Ո՞ր ջուրց. աստուածաշունչ գրոց:

Պատուանդան⁴⁷. «Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք պատուանդանի ոտից Նորա»^{6*}:

Տեղի. «Մտցուք ի յարկս նորա, երկիր պագցուք տեղւոյ, ուր կացեալ են ոտք նորա»^{7*}, թէ «Տաց քուն աչաց իմոց կամ նինջ արտեւանաց իմոց մինչեւ գտից

1 * Սղմ. ԽԴ. 7:

2 * Սղմ. ՏԳ. 2:

3 * Սղմ. ՃԹ. 2:

4 * Սղմ. ԻԲ. 4:

5 * Սղմ. Ա. 3:

6 * Սղմ. ԴԸ. 5:

7 * Սղմ. ՃԼ. Ա. 7:

զտեղի Տեառն բնակութիւն Աստուծոյ Յակովբայ»^{8*}: Զայս նշանակեաց զԽաչս տէրունական նախահայրն Յակովբ՝ փոփոխելով ձեռացն խաչանման՝ ի վերայ գազաթանց դնելով որդւոցն Յովսէփայ⁴⁸ առ ի յաւրհնել զնոսա ի ժամանակի վախճանի իւրում: Նշանակելով գուշակեաց զսմանէ նոյն ինքն Յակովբ կանխաւ երկրպագեալ⁴⁹ ի ծայր գաւազանին Յովսէփայ:

Զաւրինակ Խաչիս ունէր անդրէն գաւազանն Յակովբայ, յորժամ անց ընդ Յորդանան: Ասէ իսկ. «գաւազանաւ իմով անցից ընդ Յորդանան»^{9*}: Եւ փոքր մի քան զայս նշան Խաչիս երեւեցաւ Աբրահամու⁵⁰ ի մէջ եղջերաց խոյին աւրինակաւ, յորժամ աւրինակաւ Պատարագին նախանշան կամ նախատիպ Խաչեցելոյն ի ձեռն խոյին խորհրդաբար կատարէր:

Զաւրինակ⁵¹ Խաչիս կատարէր Իսահակ զփայտ ողջակիզն առեալ եւ զինքն ի զենումն հաւր ճեպէր, եւ զհրամանացն զհետ երթայր⁵²:

Զգաւրութիւն Խաչիս ունէր եւ գաւազանն Մովսէսի, յորժամ աւճակերպ եղեւ եւ փոխակերպեալ զեգիպտացւոց գաւազանն կլանէր⁵³ եւ զգետն յարիւն դարձուցանէր, զի մի՛ արբցեն եւ այլ եւս, զի եռային գորտք ի ջուրցն: Եւ դարձեալ, զի⁵⁴ առնէր մարախ եւ թրթուր եւ խաւար շաւափելի, զլոյսն ձեւակերպէր, եւ զոր ինչ հարուածք էած⁵⁵ ի վերայ եգիպտացւոցն:

Զնշան Խաչիս ունէր նոյն ինքն գաւազանն Մովսէսի, յորժամ զծովն Կարմիր հերձեաց յայս կոյս եւ յայն կոյս, եւ հազարաց եւ բիւրոց ժողովրդեանն զգնացս հաստատեաց ի մէջ կանգնեալ ջուրցն:

Զաւրինակ Խաչիս ունէր սիւնն հրեղէն եւ ամպն, որով առաջնորդէր Աստուած, եւ զանարձակելին Իսրայէլ յեգիպտոսէ ազատէր:

Խաչաձեւ զձեռն տարածէր նոյն ինքն Մովսէս ի լերինն բարձրացեալ, յորժամ պատերազմէր Յեսու որդին Նաւեայ ընդ այլազգին Ամաղեկ⁵⁶, եւ Իսրայէլ գաւառայր ի մարտին^{10*}:

Զաւրինակ Խաչիս կատարէր գաւազանն, որ էհար⁵⁷ զվէմն յանապատին եւ գետաբուղիս արարեալ զապառաժն եւ զանծին վէմն:

Զի՞նչ էր գաւազանն, որ ծաղկեցաւ^{11*}. ո՞չ ապաքէն նախատիպ աւրինակ էր զծնունդն եւ զԽաչն⁵⁸ Քրիստոսի: Կամ զի՞նչ Եսայիաս, որ սղոցեցաւ, որպէս ասացաք^{12*}: Թողում ասել զԱնգէոսի⁵⁹ զխաչելութիւն եւ զՍիսարայի, յորժամ փախեաւ եւ ի Դեբովրայէ բեւեռեցաւ ընդ ծամելիսն^{13*} զԽաչն յայտնապէս նախատպելով: Բայց եւ մաշկեակն Եղիայի երեւեցուցանէ ինձ զնշան Խաչին, յորժամ զհոսանսն Յորդանանու դադարեցոյց, եւ իբրեւ ի վերայ ցամաք հատակի անցեալ ի վերայ ջուրցն: Իսկ զՆղիսէի սքանչելիսն ո՞ւր դիցես, յորժամ զփայտն

8* Սղմ. ՃԼԱ 4:

9* Մկ. ԼԲ 10:

10* Վմմ. «Գանձասար», 2010, Ը, էջ 191:

11* Տե՛ս Թիւք ԺԷ 5:

12* Վմմ. Եբր. ԺԱ 37, եւ րեմ «Անկանոն գիրք Տիմ Կրակարանաց», Վենետիկ, 1896, էջ 207:

13* Տե՛ս Դաւթ. Դ 21:

արկեալ ի ջուրսն եւ մտեալ ի յակն տապարին ի խորոց գետոյն հանէր զերկաթն՝ էթեւովն զծանրագոյնն:

Մեծ է խորհուրդ խաչիս⁶⁰ ճշմարիտ, եւ ամենայն ուրեք վկայեն Գիրք սուրբ զայնս, որ նովաւ կատարէին. իբրու զայժմու սքանչելիս նախատպէր կանխաւ⁶¹ զաւրինակսն:

Երկրպագելի է խաչն, զի նովաւ զԱստուած ծանեալ:

Երկրպագելի է խաչն, զի նովաւ ընկալաք զաւրհնութիւն եւ ազատեցաք յանիծիցն:

Երկրպագելի է խաչն, զի ի նմա գոհաբանեմք զՔրիստոս:

Երկրպագելի է խաչն, զի նովաւ զդառն ճաշակումն յանցանաց տնկուոյն ի բաց քամեցաք եւ զքաղցրութիւն փրկութեան ճաշակեցաք:

Երկրպագի⁶² այսաւր խաչն, եւ կանգնէ զգլորեալսն:

Երկրպագի այսաւր խաչն, եւ բազինք կործանեցան:

Երկրպագի այսաւր խաչն, եւ զանամաւթ երեսս հերձուածողացն ամաչեցուցանէ⁶³:

Երկրպագի այսաւր խաչն, եւ անհաւատքն ողբան եւ տխրին, եւ ուղղափառքն ուրախանան եւ ցնծան:

Երկրպագի այսաւր խաչն, եւ ուրացողքն անյայտ լինին եւ երկրպագուքն յայտնապէս պայծառանան:

Երկրպագի այսաւր խաչն, եւ սատանայ վիրաւորի, եւ դասք հրեշտակացն տաւնեն պարելով:

Երկրպագի⁶⁴ այսաւր խաչն, եւ դժոխապետն յոյժ աղքատանայ եւ թագաւորք պարծին⁶⁵:

Երկրպագի այսաւր խաչն, եւ խաչեցողքն ի սիրտս իւրեանց խոցեացին եւ երկրպագուք նորա զուարճ⁶⁶ պայծառանան ջահակերպ երեսաւք:

Երկրպագի⁶⁷ այսաւր խաչն, եւ եբրայեցիք ընդ ծառայութեամբ մեղացն կապին, եւ չորս ավթոռ ուղղափառացն ազատելով պարեն աստուածազուարճ ձայնիւ սփոփեալ նորատունկ ժողով⁶⁸:

Երկրպագի այսաւր խաչն, եւ քրիստոնեայք զխայթոց սատանայի փշրեն ընդ ոտիւք իւրեանց եւ խորտակեն սորա զաւրութեամբ:

Երկրպագի այսաւր խաչն, եւ հաւատացեալք պայծառակերպ երեսաւք թքալից առնեն զդէմս հրէից⁶⁹:

Երկրպագի այսաւր խաչն, եւ հաւատացեալքս տիրեն անհաւատիցն, եւ անհաւատ հրեայքն խորտակին եւ սիրտք բեկանին քահանայապետիցն:

Ես այժմ անարժան լեզուաւ համարձակիմ գովել զգովելին⁷⁰ հրեշտակաց.

Ո՛վ խաչ⁷¹ պատուական, որ ես յոյս քրիստոնէից:

Ո՛վ խաչ երկրպագելի, որ ես յարութիւն մեռելոց եւ առաջնորդ կենաց դրախտին:

Ո՛վ խաչ ընդունելի, որ ես կուրաց առաջնորդ եւ մոլորելոց յայտնիչ⁷²:

Ո՛վ Խաչ պատմելի, ցուպ կաղաց, հաստատուն ոտք գլթելոց առ ի տանել ի խաւարէ ի լոյս:

Ո՛վ Խաչ լուսաւոր, մխիթարիչ աղքատաց, զի անդրէն քեւ ճոխանան:

Ո՛վ Խաչ հռչակելի⁷³ ամբարտաւանից քակտումն եւ խոնարհաց բարձրացուցիչ:

Ո՛վ Խաչ աւրհնեալ, սանձք մեծատանց եւ համարձակութիւն աղքատաց:

Ո՛վ Խաչ համբաւելի, ողբումն դիւաց եւ բացաւդ դրան հեթանոսաց եկեղեցեաց:

Ով⁷⁵ Խաչ զաւրաւոր, պակշոտաց կանգնումն եւ բարձր պարանոցաց խորտակիչ⁷⁶:

Ո՛վ Խաչ կենսատու⁷⁷ բանսարկուն յաղթութիւն եւ Աղամայ հաստատութիւն:

Ո՛վ Խաչ, կենաց առաջնորդ, մանկանց դաստիարակ, ծերոց զաւրացուցիչ:

Ո՛վ Խաչ, սիւն հաւատոյ, աղքատաց մեծութիւն, եւ մեծատանց⁷⁸ անիրաւաց քակող:

Ո՛վ Խաչ մեծ եւ անուանի անյուսից յոյս եւ յուսացելոց ապաւէն:

Ո՛վ⁷⁹ Խաչ փառաւոր, նաւաւարաց նաւապետ եւ ծփելոց նաւուղիղ:

Ո՛վ Խաչ ամենագով, տաքնապելոց նաւահանգիստ եւ նաւակոծելոց հաստատիչ:

Ո՛վ Խաչ սեպհական, պատերազմողաց պարիսպ եւ խաղաղութեան առիթ:

Ո՛վ Խաչ պարկեշտ, հայր որբոց եւ հարազատաց բերկրումն:

Ո՛վ Խաչ կենսաբեր, անիրաւաց դատաւոր եւ իրաւարարաց իրաւունս⁸⁰:

Ո՛վ⁸¹ Խաչ կենարար, վերակացու այրեաց եւ արդար արանց եւ կանանց պսակ⁸²:

Ո՛վ Խաչ կենսատու⁸³, արդարոց խորհրդակից եւ մեղաւորաց խրատ բարութեան:

Ո՛վ⁸⁴ Խաչ ազատիչ, նեղելոց հանգիստ եւ ազատելոց լուսատու ուղղափայլ:

Ո՛վ Խաչ բարձրաթեւ, մանկանց պահապան եւ միջահասակաց աւգնական ի պատերազմի:

Ո՛վ Խաչ թեւազուարճ, գլուխ արանց եւ կանանց, առ որս իւրեանց միաւորութիւն⁸⁵:

Ո՛վ Խաչ սեռակնածեւ⁸⁶, ծերոց կատարումն եւ տղայոց հաստատիչ:

Ո՛վ Խաչ քառաթեւ, լոյս խաւարելոց եւ ճշմարիտ լուսոյն առաջնորդ:

Ո՛վ⁸⁷ Խաչ բոցանիչ, թագաւորաց հաւատացելոց վայելչութիւն եւ թշնամեաց՝ տխրութիւն⁸⁸:

Ո՛վ Խաչ փայլականահրաշ, գէն յաւիտենականին եւ շլացուցանող զինուց հակառակողին:

Ո՛վ Խաչ բերկրիչ⁸⁹, բարբարոսացն մարդասիրութիւն եւ քաջալեզուացն^{14*} ճարտասանութիւն եւ իմաստութիւն:

Ո՛վ⁹⁰ Խաչ ազատիչ, ծառայից ազատութիւն եւ ազատելոց մեծութիւն⁹¹:

Ո՛վ⁹² Խաչ ցանկալի, անխրատից իմաստութիւն եւ իմաստնոց հանճար:

Ո՛վ Խաչ փափագելի, անաւրինաց աւրէնք եւ աւրինաւորաց բերկրումն⁹³:

Ո՛վ Խաչ բաղձալի⁹⁴, մարդարէիցն քարոզութիւն⁹⁵ եւ աւարտ քարոզութեանն:

Ո՛վ Խաչ ըղձալի⁹⁶, առաքելոցն պատմութիւն եւ պատմելոցն աւանդութիւն:

14* ՉիքՆԲՆ:

Ո՛վ խաչ կեցուցիչ, մարտիրոսացն պսակ եւ չարչարողացն խորտակիչ:

Ո՛վ խաչ բազմազաւր, վանականաց պահպանութիւն եւ քահանայից նուէրք:

Ո՛վ խաչ Հաստատիչ⁹⁷, եկեղեցեաց հիմն եւ ի հիման վէմ անբեկանելի:

Ո՛վ խաչ վերակացու, տիեզերաց զգուշութիւն եւ արարածոց Հաստատութիւն:

Ո՛վ խաչ նորոգաւղ, մեհնաց⁹⁸ աւերիչ⁹⁹ եւ եկեղեցեաց նորոգիչ¹⁰⁰:

Ո՛վ¹⁰¹ խաչ, բաբելական բազնաց աւարումն եւ սեղանոյն Քրիստոսի զարդարումն:

Ո՛վ խաչ տենչալի, հրէից գայթակղութիւն եւ բոլոր Հաւատացեալ ազանց կանգնումն:

Ո՛վ խաչ բերկրող, ճենճերացն ապականիչ եւ անուշահոտութեան բուրիչ:

Ո՛վ խաչ մխիթարիչ, ամբարշտաց կորուստ եւ բարեպաշտաց յայտնապէս կեցուցիչ¹⁰²:

Ո՛վ խաչ զաւրավիգն, տկարաց զաւրութիւն եւ զորաւորաց քաջութիւն:

Ո՛վ խաչ բարձրացեալ, հիւանդաց բժիշկ եւ առողջաց մխիթարիչ:

Ո՛վ¹⁰³ խաչ բժշկարան, ան[դա՞մ]ալուծաց ուղղիչ եւ ան[՞]ագնացից զաւրացուցիչ¹⁰⁴:

Ո՛վ խաչ պահպանող, քաղցելոց հաց եւ յագեւոց գոհութիւն:

Ո՛վ խաչ կենաբուղիս, ծարաւելոց աղբւր եւ ի քէն ըմպողացն ջուր կենսատու:

Ո՛վ¹⁰⁵ խաչ կենազգեստ, [մեր]կաց վերարկու եւ տգե[ղա]յց պայծառացուցիչ¹⁰⁶:

Եւ արդ, տկար են ամենայն լեզուք՝ գովել զքեզ ըստ արժանեաց: Եւ զայս, զոր սուղ բանիւ Համարձակեցայ զմեծէն իշխելով միայն, ըստ իշխանութեան լեզուիս զմականուանս խաչին պատուականի. յոյս, երկրպագելի¹⁰⁷, ընդունելի, պատմելի, լուսաւոր, հռչակեալ, համբաւեալ, աւրհնեալ, զաւրաւոր, կենսատու, առաջնորդ, սիւն Հաւատոյ, փառաւոր, ամենագով, պարկեշտ, կենսաբեր, կենսարար, կենսունակ, ազատիչ, բարձրաթեւ, սեռակնածեւ, քառաթեւ, բոցանիչ, փայլակնահրաշ, բերկրիչ, ցանկալի, փափագելի, յաղթող, մարտակից, բաղձալի, ըղձալի, սփոփիչ, կեցուցիչ, բազմազաւր, Հաստատիչ¹⁰⁸, վերակացու, նորոգիչ, պսակ աստուածային, տենչալի, բերկրիչ, մխիթարիչ, զաւրավիգն, բարձրացեալ, բժշկարան, պահպանող, կենսազգեստ, սանդուղք յերկինս տանող, մահու խափանիչ, ապականութեան աւտարացուցիչ, անշէջ հրոյն շիջուցիչ եւ Համարձակութիւն առ Աստուած եւ¹⁰⁹ կոչնական յերկրէ յերկինս եւ հրաւիրող յարքայութիւն, պահապան ի գիշերի եւ աշտարակ անպարտելի, ի խաւարի ձեռնկալութիւն, բարեկենդանութեան սանձումն, տխրութեան զուարթմտութիւն, ի փորձանս աւգնական, ի սուգ՝ մխիթարութիւն, ի վիշտս՝ անդորրութիւն, նեղելոց սթափումն, ի ծովու ղեկաւար, ի խաւարի ննջեցելոց զարթուցիչ, տքնեցելոց¹¹⁰ ընկերակից, աշխատելոց հանգիստ, պահեցողաց ժուժկալութիւն, եւ յոյս ամենայն տիեզերաց: Եւ մեք մեծաւ ձայնիւ գովասանութիւնս մատուցուք:

Աւրհնեալ է աստուածընկալ սուրբ խաչափայտն¹¹¹, որով աւրհնեցան ազգք հեթանոսաց:

Աւրհնեալ է Փայտն, յորում Աստուած մարմնով տարածեցաւ:

Աւրհնեալ է¹¹² Փայտն, յորում Որդին Աստուծոյ զենեալ պատարագեցաւ¹¹³ :

Եւ զի՞նչ լինիցի քան զայս զարմանալի. զԱստուած խաչեալ տեսանելով եւ զնոյն ի մէջ աւագակաց իբրեւ չարագործ¹¹⁴ :

Աւրհնեալ է¹¹⁵ Փայտն, որ փոխանակ տնկոյն, այն, որ սպան զԱդամ, կանգնեցաւ յերկրի եւ յարոյց զմեռեալն, որ սպանաւ անիծիւքն¹¹⁶ :

Աւրհնեալ է փայտն, որով աւագակն բնակեցաւ ի դրախտին:

Աւրհնեալ է¹¹⁷ Փայտն, որ զքաղցր ճաշակումն փայտին յետս խորտակեաց զդառն ճաշակմամբ:

Այս են սքանչելիք. զի զայն, որ փակեաց անախտ ստեղծուածին կողոպտելոյն Ադամայ, զնոյն ի բաց ախտացեալ կողոպտիչ աւագակին, եւ որով նա արտաքսն ել, այնու սա կոչեցեալ եղեւ քաղաքացի: Վա՛չ միմեանց վաճառին. ել գողն եւ փոխանակ ի ներքս եմուտ գողն՝ մին յանցանաւքն եւ միւսն զղջմամբ, մին միաւորեցաւ խաբողին եւ միւսն խաչակից եղեւ Արարողին:

Աւրհնեալ է Փայտն, որով տապանակն պատրաստեցաւ եւ զաշխարհս ի ջրհեղեղէն նշանապէս ապրեցոյց¹¹⁸ :

Աւրհնեալ է փայտն, յորմէ ճաշակեաց աւագակն եւ արժանացաւ կենացն փափկութեանց¹¹⁹ :

Աւրհնեալ է¹²⁰ Փայտն, զի յորմէ Ադամ ճաշակեաց ի գիտութեան փայտէն յառաջագոյն եւ զկեանս անմահս փոխարկեաց այն ճաշակմամբ հպարտացեալ, իսկ յետոյ Քեւ փոխարկեալ անդրէն ի պարտութենէն կերակրեցաւ եւ եգիտ զվերակոչումն:

Քեւ թագաւորք յարուցանեն զյաղթութիւն եւ զաւրաւորք ի ներքս բերեն զաւար եւ անաստուած բարբարով վատնին եւ մաշին:

Աւրհնեալ է Փայտն, որով զաւրութիւնք աղեղանց փշրելով խորտակին, եւ վահանք իբրեւ ի հրոյ մաշեալ այրին:

Աւրհնեալ է Փայտն, որով բազումք ամբարտաւանից բեկեցան, բարբարոսք թիկունս դարձուցեալ փախչին՝ ոչ յուժեքէ հալածելով¹²¹ :

Եւ զի՞նչ արդեւք. բարձրացուցէք ընդ իս այսաւր զձայնս ձեր եւ հանդերձ գրով զգրեալ գանձս բանին Խաչին ձայնեսցուք: Ամենայն¹²² ազգ, զոր արարեր, եկեսցեն եւ երկիր պագցեն առաջի Քո, Տէր, եւ փառաւորեսցեն զանուն Քո սուրբ, զի մեծ ես եւ առնես սքանչելիս, եւ Դու ես Աստուած միայն, եւ զՔեզ փառաւորեմք եւ զՈրդիտ Քո Միածին, որ խաչեցաւ ի վերայ¹²³ կենսաբեր Փայտին մարմնով Իւրով եւ զՀոգիդ անմահ՝ զմխիթարիչ, յաւիտեանս յաւիտենից. Ամէն¹²⁴ :

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Խորագիր՝ *A* Երանելւոյն Եպիփանու արքեպիսկոպոսի Կիպրացւոյ ասացեալ ի գովեստ սուրբ Խաչին:

Բնագիր 1 *B* Խաչին (միշտ այսպես): 2 *B* բանասարկուիկ Հակառակ զաւրութիւն փխ. բանասարկութիւն Հակառակութեան թշնամւոյ: 3 *B* յածուցեալ: 4-5 *B* չիք Խաչն ... կատարեն: 6 *B* դուռն: 7 *B* բանի: 8 *A* աշխարհի: 9-10 *B* չիք Այսաւր ... երեւի: 11 *B* իք նա: 12 *B* չիք բարձրանայ: 13 *B* չիք Քրիստոսի: 14 *B* պատճառ: 15 *B* տեսանողացն: 16 *B* տեղւոջ: 17 *B* ծագեաց: 18 *A* Թագաւորական փխ. տէրունական: 19 *B* երեւման (չիք եւ): 20 *A* յերկրի: 21 *A* մարգարէից: 22 *A* չիք մեզ: 23 *B* երկրպագեմք: 24 *B* չիք Հեթանոսացն ... մոլորութիւն: 25 *B* չիք վիրացեալ ... սրբեցաք: 26 *B* զերծաք փխ. ազատեցաք: 27-28 *B* չիք Յորմէ ... հեռացաւ: 29-30 *B* չիք Յորմէ ... ծանեաք: 31-32 *B* չիք եւ ... մերժեցաք: 33 *A* չիք որ: 34 *B* չիք անասնազոհութիւնն կոխեցաւ: 35 *B* տուն: 36 *A* բղխեաց: 37 *A* մեղաց: 38 *A* Քրիստոս: 39 *B* եցոյց: 40-41 *B* չիք ԶՔեզ ... աւրհնութեան: 42 *A* ի քեզ բարձրացաւ: 43 *B* պղնձի (այսպես եւ այլուր): 44 *B* չիք ի բաց: 45 *B* ո՞վ: 46 *B* չիք Խաչ կոչեցաւ: 47 *A* պատուական փխ. պատուանդան: 48 *B* Յովսէփու (այսպես եւ այլուր): 49 *A* երկիր պագեալ: 50 *B* Աբրաամու: 51-52 *B* չիք Զաւրինակ... երթայր: 53 *B* վանէր փխ. կլանէր: 54 *A* չիք զի: 55 *B* ած: 56 *A* Ամաղեկ, յորժամ պատերազմեր Յեսու որդի Նաւէա փխ. պատերազմեր... Ամաղեկ: 57 *A* էհան: 58 *A* զԽաչս: 59 *B* զԶանկէսի: 60 *A* Խաչիս խորհուրդ: 61 *B* չիք կանխաւ: 62-63 *B* չիք երկրպագի ... ամաչեցուցանէ: 64-5 *B* չիք Երկրպագի ... պարծին: 66 *B* զուարճացեալ: 67-8 *B* չիք Երկրպագի... ժողով: 69 *B* Հրէիցն եւ բեկանին սիրտք քահանայապետիցն: 70 *B* զփառաւոր Խաչն զպանծալին փխ. զգովելին: 71 *B* պատուական Խաչ: 72 ուղղիչ փխ. յայտնիչ: 73 *B* պատմելի փխ. հռչակելի: 74 *B* եկեղեցւոյ: 75-76 *B* չիք Ով... խորտակիչ: 77 *B* զաւրաւոր փխ. կենսատու: 78 *B* ընչասիրաց փխ. մեծատանց: 79-80 *B* Ով Խաչ ամենագով, անիրաւաց դատաւոր եւ իրաւարարաց իրաւունք: Ով Խաչ պարկեշտ, Հայր որբոց եւ վերակացու այրեաց փխ. Ով... իրաւունս: 81-82 չիք Ով ... պսակ: 83 *B* բարերար փխ. կենսատու: 84-85 *B* չիք Ով ... միաւորութիւն: 86 *B* բարձրաթեւ փխ. սեռականաձեւ: 87-88 *B* չիք Ով ... տխրութիւն: 89 *B* սեռականաձեւ փխ. բերկրիչ: 90-91 *B* չիք Ով ... մեծութիւն: 92-93 չիք Ով ... բերկրումն: 94 *B* փափագելի փխ. բաղձալի: 95 *A* քարոզութիւն մարգարէիցն: 96 *B* բաղձալի փխ. ըղձալի: 97 *B* Հաստիչ: 98 *B* մեհենից: 99 *B* աւերումն: 100 *B* սեղանոյն Քրիստոսի զարդարումն փխ. եկեղեցեաց

նորոգիչ: 101-102 B չիք Ո՛վ... կեցուցիչ: 103-104 B չիք Ո՛վ ... զաւրացուցիչ:
 105-106 B չիք Ո՛վ ... պայծառացուցիչ: 107 A երկրպագելի, լուսաւոր,
 հռչակեալ, աւրհնեալ ...: 108 B հաստիչ: 109 B չիք եւ: 110 B տքնելոց: 111
 A փայտն փխ. աստուածընկալ ... խաչափայտն: 112-113 A չիք Աւրհնեալ է
 ... պատարագեցաւ: 114 B չիք իբրեւ չարագործ: 115-116 B չիք Աւրհնեալ է
 ... անիծիւքն: 117-118 չիք Աւրհնեալ է ... ապրեցոյց: 119 A փափկութեանն:
 120-121 չիք Աւրհնեալ է ... հալածելով: 122 B Զամենայն: 123-124 B վասն
 մեր եւ զհամագոյ Սուրբ Հոգիդ յաւիտեան փխ. ի վերայ... Ամէն: